

12 Սոյն աւրինակ տեսանեմք հարկ վտանգի հասեալ ¹ստիպեալ զմեզ, առաւել ի հարկէ նաւեալք ի վերայ իմաստութեան ծովուն. զի ոչ ոք է ²ամենեւին այն ³ի մարդկանէ, ⁴որ կարող իցէ զայսպիսի ջան վաստակոց քրտնալից աշխատութեամբ անձամբ անձին մատուցանել, եթէ⁵ ոչ իշխանութեան հրամանի ⁶հասեալ՝ ստիպեալ զայս առնել տալ տազնապիցէ. եւ ո՞վ այն իցէ կարող, որ զխորս անդնոց ծովուն քննել խրոխտիցի⁷. այլ շահս⁸ աւգտութեան վաճառացն երկայն ճանապարհաւք⁹ անձանց եւ եթէ կամին մատուցանել: 13 Սոյն աւրինակ ¹⁰եւ մեք ոչ յանդգնութեամբ տղայաբար բարութիւնք ի ներքս անկանել անմտաբար հոսեցաք¹¹, ¹²այլ ակամայ ընթացեալ ըստ հրամանացն ի բռնութենէ հարկապահանջ իշխանացն՝ դիմեալ նաւեցաք ի մատենայած ծովուս պատմութեան:

14 Վասն զի ստիպեաց զաղբատիմաստ խանութս մեր հրաման թագաւորաց, եւ ի մէջ հարկ¹³ պահանջեալ¹⁴ զանցեալ ¹⁵իրացն եղելոց զիրս մատենագրել՝ յայտնական¹⁶ պատմութիւնք¹⁷, որ առ մեաւք գործեցան: 15 ¹⁸Սակայն մեծ եւ բազում ջան եղեալ¹⁹ թողուլ այնոցիկ որ յետ մեր²⁰ գայցեն՝ զկարգս զրուցաց դարուց ի դարս յիշատակել. զի ոչ եթէ կամաւք ինչ²¹

-
- 1 ac ստիպել զմեզ առաւել ի հարկէ / և ստիպեաց զմեզ, առաւել զի եւ ի հարկէ / ուղղ. ստիպեալ
 2 ac ամենեւին այն / և այն ամենեւին
 3 ac որ կարող իցէ զայսպիսի ջան ի մարդկանէ վաստակել
 4 և որ կարող է այսպիսի ջան վաստակոց
 5 ac եթէ / և թէ
 6 ac հասեալ ստիպեալ / և ստիպեալ հասեալ
 7 ac խրոխտիցի / և խոտիցի / ուղղ. խրոխտիցի
 8 ac շահ
 9 ac ճանապարհաւք
 10 pac եւ մեք ոչ յանդգնութեամբ տղայաբար բարութիւնք [ա տղաբար բարութիւնք] ինչ / և եւ մեր ոչ յանդգնութեամբ բարբառովք ինչ
 11 a հոսեցաք / և հոսեցայ / ուղղ. հոսեցաք
 12 ac այլ ակամայ ընթացեալ ըստ հրամանացն ի բռնութենէ հարկապահանջ իշխանացն դիմեալ նաւեցաք ի մատենայած [ա ի մատենայած] ծովուս պատմութեան / և այլ քան զմեզ ակամայ ընթացեալք ի բռնութենէ հրամանացն հարկապահանջ իշխանացն, առ բռնութեան նաւեալք մատենայած ծովուս դիպեցաք
 13 ac հարկս / և հարկ
 14 Բոլորք՝ պահանջել, ուղղ. պահանջեալ
 15 ac իրաց զեղելոց իրս / և իրացն եղելոյ զիրս
 16 ac յայտնական / և յայտնական
 17 և պատմութիւն / և պատմութիւնք / այս բառով սկսուում է d-ն
 18 և սակայն մեծ / և սակայն եւ մեծ
 19 և եղեալ, ուղղ. եղեալ
 20 և չիք մեր
 21 և սակայն ինչ